

**«ԱՐՅԱԼ-ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ»-Ը ԴԵՅՎԻԴ ՀԸՐԲԸՐԹ
ԼՈՐԵՆՍԻ «ԼԵԴԻ ՉԱԹԸՐԼԻՒ ՍԻՐԵԿԱՆԸ» ՎԵՊՈՒՄ**

Դեյվիդ Հըրբըրթ Լորենսը հատկապես 1915 թ.-ից հետո (նաև դրանից առաջ լույս տեսած մի շարք գործերում) գրված գրեթե բոլոր ստեղծագործություններում՝ թե՛ փոքր արձակում՝ «Կինը, որ հեռացավ» և այլ պատմվածքներ» («The Woman Who Rode Away and other stories» (1925)), «Կույսը և գնչուն» և այլ պատմվածքներ» («The Virgin and the Gipsy and Other Stories» (1930)), «Սերը խոտադեզերի արանքում» և այլ պատմվածքներ» («Love Among the Haystacks and other stories» (1930)) պատմվածքների ժողովածուներում, թե՛ վեպերում՝ «Ծիածանը» («The Rainbow», 1915), «Սիրահարված կանայք» («Women in Love», 1920), «Կենգուրու» («Kengaroo», 1922), «Լեդի Չաթըրլիի սիրեկանը» («Lady Chatterley's Lover», 1929) և այլն, թե՛ բանաստեղծական ժողովածուներում՝ «Բազում սերեր» («Amores», 1916), «Տես, մեզ դա հաջողվեց» («Look! We've Come Through», 1917), նաև Լորենսի կողմից խմբագրված վերջին՝ «Մտորումներ» («Pansies», 1929) բանաստեղծությունների ժողովածուում և հետմահու՝ անգլիացի գրող Բիչըրդ Օլդինգթոնի կողմից խմբագրված «Վերջին բանաստեղծություններ» («Last Poems», 1932) և այլ ժողովածուներում, թե՛ առանձին էսսեներում՝ «Սեր» («Love», 1918), «Մենք միմյանց կարիքն ունենք» («We Need One Another», 1930), «Ոչ ոք ինձ չի սիրում» («Nobody Loves Me», 1930), «Լեդի Չաթըրլիի սիրեկանի մասին» («A Propos of Lady Chatterley's Lover», 1936) և թե՛ առանձին գրքերում՝ «Հոգեվերլուծությունը և անգիտակցականը» («Psychoanalysis and the Unconscious», 1921), «Անգիտակցականի ֆանտազիան» («Fantasia of the Unconscious», 1922) անգլիացի մոդեռնիստ հեղինակը ներկայացնում է իր ժամանակների և նաև մեր օրերի համար իր բավականին հեղափոխական պատկերացումները մարդկային բնության, մարդու և աշխարհի, նաև սեռերի միջև փոխհարաբերության խնդիրները, հետևողականորեն զարգացրել է մարդու անգիտակցականի սեփական տեսությունը՝ առանձնացնելով «արյան-գիտակցություն» (blood-consciousness) և «մտքի-գիտակցություն» (mind-consciousness) եզրույթները՝ մարդուն ներկայացնելով որպես մի էակ,

որը երկպառակտված է այս երկու բևեռների միջև, և միայն բացառիկ ճիգի օգնությամբ կարող է թուլացնել սեփական ինտելեկտի սպանիչ իշխանությունը, ներսում արթնացնել կիրք-մարմին աշխարհաստեղծ ու կենարար բնությունը՝ զգալով և ապրելով իրական գոյություն՝ «արյան-գիտակցությունը»:

«Արյան-գիտակցություն» հեղինակային եզրույթը Դ. Հ. Լորենսը հետևողականորեն զարգացնում է իր «Հոգեվերլուծությունը և անգիտակցականը» և «Անգիտակցականի ֆանտազիան» աշխատությունների մեջ՝ վերածելով անգիտակցականի վերաբերյալ ծավալուն մի տեսության, հիմքում ունենալով Զիգմունդ Ֆրոյդի հանրահայտ աշխատությունները մարդու հոգեկան ամբողջական համակարգի մասին, որը ավստրիացի հոգեվերլուծաբանը ներկայացնում էր որպես երեք տարբեր մակարդակների փոխազդեցություն, և դրանց գիտականորեն անվանում՝ գիտակցություն, նախագիտակցություն (կամ «հասանելի հիշողություն») և անգիտակցական: Ֆրոյդի համար անգիտակցականը իրացիոնալ կամ մոգական, մարդու գիտակցության համար անձանաչելի մի ոլորտ չէր: Անգիտակցականը նրա համար իրական և օբյեկտիվ, նույնիսկ, էմպիրիկ ոլորտ էր, որը կարելի էր ուսումնասիրել, քննել, փորձարարության ենթարկել և, ամենակարևորը, հասկանալ և հետազոտել մարդու գիտակցության սահմաններում: Եվ հենց այստեղ էլ ակնհայտ է Լորենսի և Ֆրոյդի տեսությունների սկզբունքային տարբերությունը, որի մասին անգլիացի գրողը մանրամասնորեն խոսում է իր «Հոգեվերլուծությունը և անգիտակցականը» աշխատության երկրորդ գլխում, որն անվանել է՝ «Ինցեստի շարժառիթը և իդեալիզմը» («The Incest Motive and Idealism»): «Ակնհայտ է, որ մենք անկարող ենք վերագտնել մեր բարոյական հենարանը, մինչև որ կերպ ի զորու չլինենք որոշել անգիտակցականի իրական բնությունը: Անգիտակցական բառն ինքնին ժխտական պարզ սահմանում է և չունի դրական իմաստ: Կասկածից վեր է, որ Ֆրոյդն այն նախընտրել է հենց այս պատճառով: Նա մերժում է ենթագիտակցությունն ու նախագիտակցությունը, քանզի երկուսի բովանդակությունն էլ այս կամ այն կերպ կապված է գիտակցության հետ, մշուշոտ գիտակցության, որ առաջնորդում է դեպի հոգեկան իրագործում: Իսկ նրա (նկատի ունի Ֆրոյդին - հեղ.) անգիտակցականը նման բան չի ենթադրում»¹:

¹ D. H. Lawrence, Psychoanalysis and the Unconscious and Fantasia of the Unconscious, Dover Publications, INC. Mineola, New York, 2005, p. 10.

Լորենսի «արյան-գիտակցությունը» հաճախ նույնացնում են միայն կրքի և մարմնական սիրո՝ սեքսի հետ, սակայն դա այդպես չէ: Մարմնական սերը դրա կարևոր բաղկացուցիչն է, առանց որի մարդը չի կարող ամբողջանալ և ծուլվել բնության հետ, տիեզերական-աստվածային էներգիան մակրոկոսմոսից տեղափոխել միկրոկոսմոս և շարունակել կյանքի հավերժական ընթացքը, ինչն էլ տեսնում ենք «Լեդի Չաթլերլիի սիրեկանը» վեպի ավարտին, երբ Կոնին հայտնաբերում է, որ ինքը հղի է և, փաստորեն, դառնալու է կյանքի շարունակողը: Ի դեպ, մարմնականն ու հոգևորը, նաև մարդու հոգեկան ոլորտը գտնվում են անքակտելի կապի մեջ և փոխլրացնում իրար: Ամերիկացի տասնիններորդ դարի բանաստեղծ Ուոլթ Ուիթմենն առաջինն էր, որ շեշտեց հոգու և մարմնի հավասարությունն ու դրանց միջև բացառեց որևէ տեսակի հիերարխիա՝ համարելով, որ երբ անդամահատվում է մարմինը, զուգահեռաբար անդամահատվում է նաև հոգին, և հակառակը: Ուոլթ Ուիթմենն իր պոեզիայում ուղղակիորեն հրամայում է հոգուն՝ «իջի՛ր ներքև, ապրի՛ր և տառապի՛ր մարմնիդ հետ միասին»: Լորենսի «Լեդի Չաթլերլիի սիրեկանը» վեպում հանդիպում ենք նաև ուիթմենյան այս ավանդույթին, երբ Կոնին, լսելով ամուսնու խոսքերը Մելլրոսի կնոջ մասին, կարծես տեսնում է, որ ամուսինն արդեն մեռած է. «Եվ երբ նա առանձնահատուկ նայեց Կոնիին՝ առանձնահատուկ, որոշակի իմաստ հաղորդելով հայացքին, Կոնին զգաց, որ մշուշը, ոչնչությունն արդեն ամբողջությամբ պատել էր ամուսնու ուղեղը: Դա սարսափեցրեց Կոնիին: Եվ ստիպեց, որ ամուսինն անանձնական թվար, գրեթե ապուշ»²: Հենց այս մտապատկերն էլ Կոնիին դրդում է գիտակցել երևույթների իրական շարժումը, դրանց միջուկը. «Եվ Կոնին աղոտ գիտակցեց մարդկային հոգու մեծագույն օրենքներից մեկը: Երբ հուզական հոգին խոցող հարված է ստանում, որը չի սպանում մարմինը, մարմինն ապաքինվելիս հոգին կարծես նույնպես ապաքինվում է: Բայց դա միայն թվում է: Իրականում սոսկ հոգուն ենք փոխանցում մարմնին վերաբերող սովորական հասկացությունները: Հոգուն հասցրած վերքը դանդաղ, անչափ դանդաղ է իրեն զգացնել տալիս, կապտուկի պես, որ դանդաղորեն միայն խորացնում է սարսափելի ցավը, մինչև կաարուրի հոգեկանն ամբողջությամբ: Եվ երբ մեզ թվում է, թե ապաքինվել ենք և մոռացել ենք ցավը, հենց այդ ժամանակ է, որ սարսափելի հետևանքներն ամբողջ դաժանությամբ հիշ-

² Լորենս Դ. Հ., «Լեդի Չաթլերլիի սիրեկանը», «Լուսակն» հրատ., Երևան, 2014, էջ 91-92.

եցնում են իրենց մասին»³: Սակայն, այստեղ պետք է նշել, որ պարոն Չաթլերլիի մարմինը չի ապաքինվել, և չի էլ կարող ապաքինվել: Նրա հաշմությունն անդառնալի է, Կոնին իր այս պայծառացման պահին, դեռևս նոր է սկսում գիտակցել հոգու և մարմնի բարդ փոխհարաբերությունը, և հենց այդ պատճառով էլ, այնուամենայնիվ, հիմնական շեշտը դնում է հոգու վրա: Ավելի ուշ՝ Մելլրոսի գրկում հայտնվելուց հետո, Կոնիի աշխարհայացքն էլ ավելի կզարգանա և կփոխվի:

Ահա թե մարմնական սիրո և իդեալիզմի մասին, որի հիմքը «իդեան» և «հոգևոր գիտելիքն է», ինչպես է արտահայտվում Լորենսն իր «Լեդի Չաթլերլիի սիրեկանի մասին» էսսեում. «Սա մեր քաղաքակրթության այլանդակ հիմնասյունն է: Ինչպես ազդարարում է ռազմական վեպի մասին գովազդը. այն դյուցազներգություն է՝ «ընկերության և հույսի, ցեխի և արյան»: Ինչը, անշուշտ, նշանակում է, որ ընկերությունն ու հույսը պետք է ավարտվեն ցեխով և արյամբ: / Երբ սեքսի և մարմնի դեմ սկիզբ առած արշավանքը Պլատոնի զորակցությամբ մեծ թափ հավաքեց, այն վերածվեց արշավանքի հանուն «իդեալների», նաև՝ «հոգևոր» գիտելիքի: Սեքսը մեծագույն միավորողն է: Իր արագ և դանդաղ տատանումներով այն արտահայտում է սրտի ջերմությունը, որը մարդկանց երջանկացնում է իրենց միասնության մեջ: Իդեալիստական փիլիսոփայություններն ու կրոնները սկսեցին դիտավորությամբ սպանել այն: Եվ արեցին դա: Այժմ նրանք հաջողության հասան: Ընկերության և հույսի վերջին մեծ եռքը տրորվեց ցեխով և արյամբ: Այժմ բոլոր մարդիկ առանձին և փոքրիկ էություններ են: Երբ «բարությունը» օրվա ձարտարախոս հրամայականն է – բոլորը պետք է «բարի» լինեն – այս «բարության» ներքո մենք գտնում ենք սրտի սառնություն, սրտի սակավություն, անսրտություն, որ անչափ տաղտկալի է: Յուրաքանչյուր ոք սպառնալիք է մյուս բոլորի համար»⁴:

Լորենսը կարծում էր, որ իր հայրենի Անգլիայում խաթարված են ոչ միայն տղամարդու և կնոջ միջև բնական հոգևոր և ֆիզիկական հարաբերությունները, այլև մարդկային հարաբերություններն առհասարակ, և սա էլ իր հայրենիքի կյանքի անկումի հիմնական պատճառն է: Իր «Խուձապի դրություն» հոդվածում Լորենսը հենց վերոգրյալ խնդրին է անդրադառնում՝ նշելով, որ իր հիմնական առաքելությունը

³ Լորենս Դ. Հ., «Լեդի Չաթլերլիի սիրեկանը», «Լուսակն» հրատ., Երևան, 2014, էջ 92.

⁴ D. H. Lawrence, *Lady Chatterley's Lover and a Propos of Lady Chatterley's Lover* (Edited by Michael Squires), Cambridge University Press, 2002, page 332.

մարդկանց միջև բնական և կենսատու հարաբերության վերականգնումն է, առանց որի՝ ոչ միայն ներդաշնակությունն է անհնար, այլև խորը ատելություն է սերմանվում մարդկանց միջև. «Սակայն մեր քաղաքակրթությունը՝ իր սոսկալի վախերով և խուճապով և բռնաձնշումներով և ատելությամբ, գրեթե ոչնչացրել է տղամարդկանց և տղամարդկանց, և տղամարդկանց և կանանց միջև համակրանքի բնական հոսքը: / Եվ ես հենց այս եմ ուզում կյանքի կոչել. լոկ հանուր համակրանքի բնական ջերմ հոսքը՝ տղամարդու և տղամարդու, տղամարդու և կնոջ միջև»⁵:

Ընդունված է, որ Լորենսի մոտ «արյան-գիտակցության» գաղափարը ծնվել է նրա՝ Քորնվոլ մեկնելուց հետո, որտեղ՝ կելտական հեռավոր բնակավայրերում, անգլիացի գրողն իր համար հայտնաբերում է մինչ քրիստոնեական ժամանակների քաղաքակրթության տարատեսակ մշակութային կոթողներ և ավերակներ: Սակայն բազմաթիվ կենսագիրներ և գրականագետներ փաստում են, որ Լորենսը շատ ավելի շուտ է հղացել իր «արյան-գիտակցության» տեսությունը, և հատկապես մատնանշում են նրա և Բերթրան Ռասելի նամակագրությունը: Մասնավորապես 1915 թ.-ի դեկտեմբերի 8-ի նամակում Լորենսը անգլիացի մաթեմատիկոս-փիլիսոփային մանրամասնորեն ներկայացնում է «արյան գիտակցության» իր նոր տեսությունը. «Կարդում էի Ֆրեյդերի⁶ «Ոսկե ձյուն» ու «Տոտեմիզմն ու էկզոգամիան»»: Այժմ ցանկանում եմ խոստովանել այն հավատամքը, որ ունեցել եմ քսան տարեկանում: Դա այն է, որ բացի ուղեղից և նյարդային համակարգից գիտակցությունն ունի մեկ այլ «նստավայր». գոյություն ունի «արյան գիտակցություն», որ մեր ներսում է, սակայն անկախ է պարզ հոգեկան գիտակցությունից, որ կախման մեջ է աչքից՝ որպես աղբյուրի կամ կապողակի: Գոյություն ունի արյան-գիտակցություն՝ սեռա-

5 Complete Works of D. H. Lawrence, Delphi Classics, eBook. <https://books.google.am/books?id=EIEbAgAAQBAJ&pg=PT9399&lpg=PT9399&dq#v=onepage&q&f=false>

6 Սըր Ջեյմս Ջորջ Ֆրեյդեր (1854-1941թթ.), շոտլանդացի անտրոպոլոգ, որ կրթություն է ստացել Գլազգոյում և ավարտել է Քեմբրիջի Տրինիտի քոլեջը: 1907-1922 թթ.-ին եղել է Լիվերպոլի համալսարանի սոցիալական անտրոպոլոգիայի պրոֆեսոր: Հայտնի է որպես «Ոսկե ձյունը» (1890-1915թթ.) տասներկուհատրանի աշխատության հեղինակ: Նրա «Տոտեմիզմն ու էկզոգամիան» քառահատոր աշխատություն է՝ տպագրված 1910 թ.-ին:

կան կապողակով, որ նույն դերն է կատարում, ինչ տեսնելը՝ հոգեկան գիտակցության համար⁷»:

Սակայն, միևնույն ժամանակ, չենք կարող անտեսել այն փաստը, որ Քորնվոլում անցկացրած ժամանակահատվածն անուրանալի հետք է թողել Լորենսի տեսության գործնական իրագործման, կատարելագործման և ամբողջացման առումով: Ջեյն Քոսթինի «Լորենսի «լավագույն արկածը». արյան-գիտակցությունը և Քորնվոլը» ուսումնասիրությունն ամբողջությամբ նվիրված է հենց այս թեմային. «1915-ի դեկտեմբերին Լորենսի մեկնումը Քորնվոլ⁸ սկիզբ դրեց վերջինիս կյանքում մի անչափ կարևոր դրվագի մեկնարկին, որը հեղափոխիչ ազդեցություն էր ունենալու գրողի մտածողության վրա»⁹:

Լորենսն իր «Ամերիկյան դասական գրականության ուսումնասիրության» գրական էսսեների ժողովածուի մեջ տեղ գտած «Նաթանիել Հոթորնը և Ալ-կարմիր նամակը» էսսեում հետաքրքիր դիտարկումներ է անում «մտքի գիտակցության» և «արյան-գիտակցության» վերաբերյալ՝ մարդուն դիտարկելով որպես երկատված և պառակտված մի էակի, որը տեխնոկրատական զարգացման արդյունքում սեփական-բնատուր դուալիզմն ընկալում է որպես թշնամական և անբնական մի բան և հետևաբար դրան չարությամբ է արծագանքում. «Մեր օրերում մարդն ասում է դուալիզմի գաղափարը: Լավ չէ. մենք երկակի ենք: Խաչը: Եթե մենք ընդունում ենք այս խորհրդանիշը, ուրեմն, ըստ էության, ընդունում ենք փաստը: Մենք բաժանված ենք հենց մեզ վրա»¹⁰: Եվ հենց սա էլ դառնում է ներքին սուր կոնֆլիկտի պատճառը:

Լորենսը, որպես հիմնական կոնֆլիկտի պատճառ, դիտարկում է մարդու ինտելեկտը, ավելի ձիշտ՝ ամեն բան ինտելեկտի օգնությամբ ձանաչելու մարդու անդիմադրելի նկրտումը, որն էլ դառնում է վերջինիս կուրության, կամ կեղծ ամենիմացության և ինտելեկտի պաշտամունքի պատճառը: Իսկ «արյունը» լիովին այլ բան է ցանկանում. «Ըստ էության՝ արյունն ասում է, երբ ՃԱՆԱԶՎՈՒՄ Է մտքի կողմից: Այն

7 D. H. Lawrence, The Letters, Volume II, June 1913 – October 1916 (Edited by George J. Zytaruk, James. T. Boulton), Cambridge, Cambridge University Press, 1981, p. 470.

8 Ափամերձ շրջան Անգլիայում, որի փերը հյուսիսարևմտյան կողմից ողողում է Կելտական ծովը, իսկ հարավից՝ Անգլիական ջրանցքը:

9 Jane Costin, Lawrence's "Best Adventure": Blood-Consciousness and Cornwall, p. 151.

10 D. H. Lawrence, "Studies in Classic American Literature, Volume 2", Cambridge University Press, Cambridge, 2003, p. 83.

զգում է սեփական կազմաքանդումը, երբ ՃԱՆԱԶՎԱԾ Է: Հետևաբար, նաև մեկուսի լինելու կատարյալ բնագոյը»¹¹: Արյունը չի ցանկանում գիտակցվել և ճանաչվել, այն պետք է գործի ինքնաբերականորեն, սեփական բնագոյով և օրենքներով: Օրենքներ, որոնք ինտելեկտը չի կարող հասկանալ, քանզի դա այն չէ, ինչը հակառակ է ինտելեկտին, սակայն այն է, ինչն ինտելեկտ չէ: Մի լիովին այլ չափման ոլորտ և իրականություն: Հետևաբար հենց այս պատճառով էլ միտքը ատում է «արյան շարժումը», «արյան-գիտակցությունը». «Մյուս կողմից էլ, մարդու միտքն ու հոգևոր գիտակցությունը պարզապես ատում են արյան-ակտերի խավար ուժը. ատում են անխառն խավար զգայական օրգազմները, որոնք, ժամանակի ընթացքում պարզապես ջնջում են միտքը և հոգևոր գիտակցությունը, դրանք ընկղմում խավարի խեղդող ջրհեղեղի մեջ»¹²:

Ամենահետաքրքրականն այն է, որ Լորենսն այս ներքին կոնֆլիկտը բնական է համարում: Երկակիություն, որին հնարավոր չէ ո՛չ հաղթել և ո՛չ էլ դրանից ազատվել, այլ՝ միայն կրել որպես խաչ. «Սրանից չես կարող ազատվել: Արյան-գիտակցությունը ողողում է, սրբում և զրոյացնում մտքի-գիտակցությունը: Մտքի-գիտակցությունը լուեցնում է արյան-գիտակցությունը և խժռում արյունը: Մեզ հատուկ են երկու գիտակցությունն էլ: Երկու հակամարտ գիտակցություններ մեր ներսում: Դրանք երբեք չեն փոխվի: Սա է մեր խաչը»¹³:

Լորենսի արյան գիտակցությունը անվիճարկելիորեն կապված է մարմնական սիրո և առհասարակ մարդու մարմնի հետ: Այն պահին, երբ Կոնիի ներսում ծնվում են «արյան-գիտակցության» արթնացման առաջին շողարձակումները, նա սկսում է ուսումնասիրել սեփական մարմինը, մի բան, որը չի արել բավականին երկար ժամանակ՝ վերածվելով լիովին առողջ մի իսկական «հաշմանդամի». «Երբ Կոնին իր ննջասենյակը բարձրացավ, արեց այն, ինչ վաղուց չէր արել. լրիվ մերկացավ և սկսեց սեփական մարմինը զննել հսկայական հայելու առաջ: Լիովին համոզված չէր, թե ինչ էր փնտրում, կամ ինչ էր ուզում տեսնել, բայց լամպն այնպես դրեց, որ մարմինն ամբողջությամբ լույ-

սի մեջ լիներ»¹⁴: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ հերոսուհին սկզբում չի էլ գիտակցում իր գործողությունների պատճառը: Այս պարագայում հիշենք, որ «արյան-գիտակցությունը» գործ ունի անգիտակցականի և մարդու ինտուիտիվ-իռացիոնալ կենսոլորտի հետ, և այն գիտակցելը անչափ դժվար է ու մտքին անմիջապես հակասությունների առիթ է տալիս, որոնց մեջ Կոնին զգում է ամենակարևորը՝ թե որչափ «սրտաշարժ» ու «անավարտ է» իր մարմինը: Կոնին այս պահի մեջ սկսում է գիտակցել նաև ժամանակի հարահոսությունը, որ առաջին հերթին արտացոլված է հայելում շողշողացող իր մարմնի պատկերում. «Եվ մտածեց, իսկ դա հաճախ էր լինում նրա հետ, թե որքան փխրուն, որքան անպաշտպան ու որքան սրտաշարժ է մարդկային մերկ մարմինը, որքան անավարտ ու անկատար: / Մարդիկ ենթադրություններ էին անում, որ նա բավական բարեկազմ մարմին ուներ, բայց այժմ դարձել էր հնաոճ, չափից ավելի կանացի, այլևս պատանյակի մարմին չէր հիշեցնում: Առանձնապես բարձրահասակ չէր, շոտլանդացուն վայել հաստամարմին էր ու կարծիկ, բայց նրա շարժումներն առանձնանում էին անթաքույց նազանքով ու հորդացող նրբագեղությամբ, որ հաճախ որպես գեղեցկություն էր ընկալվում: Մաշկը թեթևակի թուխ էր, վերջավորությունները՝ հանդարտաշարժ, մարմինը դեռ մի քիչ տեղ ուներ լցվելու ցած հոսող ձիսությամբ, բայց ինչ-որ բան այնուամենայնիվ պակասում էր»¹⁵: Եվ կրկին Լորենսը շեշտում է Կոնիի ներբացահայտման անանցանելիությունն ու գիտակցության օգնությամբ իրականությունը վերլուծելու անկարողությունը: Կոնիի մտքի հոսքը բավական սահուն ու հավասարակշռված է, սակայն հենց նա փորձում է ամբողջացնել պատկերը՝ գիտակցությունը խափանվում է՝ տեղը գիջելով անորոշ եզրահանգմանը՝ «ինչ-որ բան պակասում էր»: Ուշագրավ է, որ Կոնին իր մարմնի ներկա վատթար վիճակը ներկայացնում է ավեգորիայի միջոցով. «Հասունանալու հետ փոխարենն ավելի ձգվեր ու պնդանար, նրա մարմինը կորցրել էր ձկնությունը և կոպտացել էր: Կարծես արևի ու ջերմության պակաս էր զգում, գորշացել էր ու չորացել: / Հիասթափված իրական կանացիությունից՝ չէր հաջողել նաև տղեկավարի և եթերային ու թափանցիկ

11 D. H. Lawrence, "Studies in Classic American Literature, Volume 2", Cambridge University Press, Cambridge, 2003, p. 83.

12 D. H. Lawrence, "Studies in Classic American Literature, Volume 2", Cambridge University Press, Cambridge, 2003, p. 83.

13 D. H. Lawrence, "Studies in Classic American Literature, Volume 2", Cambridge University Press, Cambridge, 2003, p. 83.

14 Լորենս Դ. Հ., «Լեդի Չաթերլիի սիրեկանը», «Լուսակն» հրատ., Երևան, 2014, էջ 119:

15 Լորենս Դ. Հ., «Լեդի Չաթերլիի սիրեկանը», «Լուսակն» հրատ., Երևան, 2014, էջ 119:

դառնալ, այլ կորցրել էր գույնն ու փայլը»¹⁶: Իսկ վերագրյալին հաջորդող մտքերն արդեն ամբողջությամբ բացահայտում են, թե ինչ է կատարվում կնոջ մարմնի հետ, երբ այն զուրկ է լինում մարմնական սիրուց. «Կրծքերը բավականին փոքր էին, կախանի տանձի չափ: Բայց խակ էին, մի քիչ տխրատես և կախ էին ընկել անհիմաստ: Որովայնը կորցրել էր երբեմնի թարմությունն ու պիրկ կլորությունը, երբ դեռատի աղջիկ էր և գերմանացի տղայի հետ էր, որ իսկապես մարմնական սեր էր պարզևու՜մ նրան: Այն ժամանակ աղջկական որովայնը մեծ սպասումներ և, իրոք, յուրահատուկ տեսք ուներ: Այժմ թարշամել էր ու թեթևակի հարթվել, նաև նիհարել էր, բայց այդ նիհարությունը թառամելու նշան էր: Ազդրերը նույնպես, որ ժամանակին ձկուն ու ձյունափայլ էին կանացի կլորությամբ, սկսել էին հարթվել-տափակել ու թուլանալ, և դրանց իմաստն անհասկանալի էր»¹⁷: Մարմինը նկարագրելիս Լորենսը դրա մասերին հաղորդում է մարդկային հատկանիշներ: Ասես մարմնի յուրաքանչյուր օրգան և ծալք առանձին-ինքնուրույն էություններ լինեն, որոնք մատնված են մենության և օտարացման: Եվ պատահական չէ, որ ավելի երկար նկարագրում է հենց կրծքերը: Լորենսի համար մարդու կուրծքն առանձնահատուկ նշանակություն ունի: Այս մասին նա հանգամանորեն խոսում է «Հոգեվերլուծությունը և անգիտակցականը» գրքի չորրորդ՝ «Երեխան և նրա մայրը» գլխում, որտեղ կուրծքն առանձնացնում է որպես մարդու առանձին և գերկարևոր հաղորդակցման օրգան. «Երբ կյանքի են կոչվում վերին կենտրոնները՝ բացվում է գիտակցական տարերային-ինքնաբերական ակտիվության մի լիովին նոր դաշտ: Կրծքի մեծ սիմպաթիկ հանգույցը կարելի է անվանել սրտի «բանականություն»: Մարդու մարմնի վերնամասում գտնվող կրծքավանդակային այս հանգույցը ձգարիտ համապատասխանում է ներքևում գտնվող արևային հյուսակին: Սակայն սա ստեղծագործական հակադրության համապատասխանություն է: Կրծքի սիմպաթիկ կենտրոնից, ասես պատուհանից, անգիտակցականը նայում է դուրս՝ փնտրելով իր օբյեկտին, որպեսզի կառչի դրանից: Երբ երեխան կրծքով հենվում է իր մորը, նրա կուրծքը

16 Լորենս Դ. Հ., «Լեդի Չաթրլիի սիրեկանը», «Լուսակն» հրատ., Երևան, 2014, էջ 119:

17 Լորենս Դ. Հ., «Լեդի Չաթրլիի սիրեկանը», «Լուսակն» հրատ., Երևան, 2014, էջ 120:

լցվում է մոր առաջնային գիտակցումով. նա ոչ թե ցանկանում է նրան, կամ ըմբռնվում նրա գոյությունը, այլ զգում է իր մոր էությունը»¹⁸:

«Արյան-գիտակցությունը» որևէ դեպքում չի կարելի նույնացնել սեքսի պարզունակ-առօրեական ընկալման հետ, որը Լորենսը մեծագույն դժբախտություն էր համարում, իր ավանդապաշտ հայրենիքն անվանելով «սեքսագուրկ Անգլիա». «Այժմ սկսում եմ հասկանալ, թե ինչու են վիրավորվել իմ քննադատները՝ ծանոթանալով սեքսի իմ փառաբանմանը: Նրանք սեքսի միայն մեկ ձև գիտեն. նրանց առաջ ծառայել է սեքսի միայն մեկ ձև. ջղագրգիռ, անձնական, կազմալուծող մեկը՝ «սպիտակ» սեքսը: Եվ սա, վստահաբար, պճնյալ և կեղծ բան է, մի բան, որի հետ հույս չես կապի: Լիովին համաձայն եմ: Եվ լիովին համաձայն եմ, որ չենք կարող հույսեր փայփայել, որ Անգլիան կբարեփոխվի և կազատագրվի սեքսի նման տեսակից»¹⁹:

Իսկ Լորենսի նախընտրածը «ջերմ արյուն-սեքսն է» (կրկին հիշենք, որ «Լեդի Չաթրլիի սիրեկանը» վեպը Լորենսը սկզբում անվանել էր «Քնքշանք» (“Tenderness”)), հեթանոսական-նախնական-բնական կիրքը տղամարդու և կնոջ միջև, որ մարդուն երջանկություն և հարմոնիա է պարզևու՜մ դառնալով յուրահատուկ ծիսական, սակայն ներքին-ծպտյալ մի հարաբերություն, որ մարդուն տեղափոխում է լիովին այլ ոլորտ՝ ինտուիցիայի և անգիտակցականի՝ դառնալով նոր ծննդի և սերնդի շարունակման միակ իրական ու ճշմարիտ հնարավորությունը. «Եվ մյուսը՝ ջերմ արյուն-սեքսն է, որ հաստատում է գոյությունը և վերակենդանացնում կապը տղամարդու և կնոջ միջև. ինչպե՞ս վերադարձնենք այն: Ես չգիտեմ: Ուղղակի պետք է վերադարձնենք. կամ երիտասարդները պետք է դա անեն: Այլապես կործանված ենք բոլորս: Քանզի ապագայի կամուրջը ֆալլոսն է, և ահա՛, ընդհատվում է այն: Եվ ոչ թե նվազ ջղագրգիռ, կեղծ ֆալլոսը ժամանակակից «ջղագրգիռ» սիրո: Ոչ այդ»²⁰:

Ներկայացվող այս դրվագում Կոնիի ներսում ակտիվանում ու ծավալվում է «արյան-գիտակցություն»-ը, և նա արդեն ի զորու է իր գալիք սեռական դեգերման մեջ որսալ կյանքի մասին նորանոր ձգմար-

18 D. H. Lawrence, *Psychoanalysis and the Unconscious and Fantasia of the Unconscious*, Dover Publications, INC. Mineola, New York, 2005, p. 31.

19 D. H. Lawrence, *Lady Chatterley's Lover and a Propos of Lady Chatterley's Lover* (Edited by Michael Squires), Cambridge University Press, 2002, page 327.

20 D. H. Lawrence, *Lady Chatterley's Lover and a Propos of Lady Chatterley's Lover* (Edited by Michael Squires), Cambridge University Press, 2002, page 327.

տություններ: Լայնարձակ զգացումներ, որ մինչ այդ անչափ խորթ էին եղել այդ կնոջ համար. «Լիհար մարմնի բոլոր շարժումներն անշտապ էին, բայց ծարպիկ, և շուտով ավարտեց վանդակը մեխել, հետո շրջեց, ստուգեց շարժական դռնակը և մի կողմ դրեց: / Իսկ Կոնին աչք չէր կտրում նրանից: Նրա մեջ տեսնում էր նույն օտարացումը, որ երբ նա մերկ էր, հագուստը ոչինչ չէր թաքցրել, մենավոր գազանի պես մեկուսացած էր ու վճռական, բայց նաև մտահոգ, ինչպես նրա հոգին, որ փախչում, խուսափում էր մարդկային ամեն շփումից: Լոեյայն ու համբերատար նույնիսկ հիմա էր փախչում Կոնիից: Սակայն անհամբեր ու կրքոտ մարդու հանդարտությունն ու անսահման համբերությունն էր, որ ավելոծել էր Կոնիի ընդերքը: Կոնին հենց դա էր տեսնում նրա գլխի շարժումների, ծարպիկ, անշտապ ձեռքերի, նիհար, զգայուն իրանի կորուսյալ մեջ՝ համբերություն և օտարացածություն: Կոնին զգում էր, որ նա իրենից ավելի խորն ու ընդգրկուն էր ծանաչել կյանքը, և նրան հասցված հարվածները նույնպես ավելի խորն էին ու ընդգրկուն և, հավանաբար, ավելի անողորմ: Դա կարծես թեթևացրեց Կոնիի՝ սեփական ձախորդությունների ու հոգսերի ծանրությունը և գրեթե վերացրեց պատասխանատվության բեռը: / Եվ Կոնին, ասես երազի մեջ, նստել էր հյուղակի դռան շենքին՝ լիովին անտեղյակ ժամանակից և առանձնահատուկ պայմաններից, որոնց մեջ հայտնվել էր»²¹:

Մելլրոսի շարժումները, որ անվերջ շեշտվում են որպես հանդարտ ու անշտապ, Կոնիի մտապատկերում ասես բացահայտում են տղամարդու էությունը, նրա տառապանքը, նրա ներսը: Եվ Կոնին սկսում է տեսնել Մելլրոսի շորերի միջով՝ «Նրա մեջ տեսնում էր նույն օտարացումը, որ երբ նա մերկ էր, հագուստը ոչինչ չէր թաքցրել...»: Մելլրոսի մարմնի միջով տեսնում է վերջինիս միջուկը, էությունը: Կոնիին այլևս չի կարող խաբել ոչ բարձր խավի պծնանքը և ոչ էլ աղքատի խղճուկ հագուկապն ու արտաքինը: Կոնիի մեջ արթնացել է «արյան-գիտակցությունը», և ինչպես անվերջ նշվում է վեպում, կինը դա զգում է իր «ընդերքով, իր «ներսով», իր «արգանդով»: Եվ փոխանակ այս իրականությունը ծանրացնի Կոնիի ներքին բեռը, նրան մղի ավելի խորը մտորումների ու ներսուզումների, հերոսուհին ազատության զգացում է ապրում և իրեն զգում է «ասես երազում»:

Այս դրվագում նկարագրվում են Կոնիի մտորումները Մելլրոսի մասին, այն էլ «սեփական սենյակում», որ համադրելի է վուլֆյան «սենյակ-

21 Լորենս Դ. Հ., «Լեդի Չաթերլիի սիրեկանը», «Լուսակն» հրատ., Երևան, 2014, էջ 147-148:

կի» հետ. հերոսի կողմից աշխարհի իրականությունը և էությունը տեսնել-տեսանելու և երևույթների ներսը ներթափանցելու միակ ներքին դիտակետը մարդու համար: Սակայն այդ սենյակում միայն «մտքի-գիտակցությամբ» շարժվելն անհնար է: Ավելի ձիշտ կլինի ասել, որ Կոնին փորձում է գիտակցության մաքուր դաշտ բերել այն, ինչ ինքը զգում է անտառապահի հանդեպ, սակայն նրա մտքի ընթացքին հետևելով՝ հասկանում ենք, որ գիտակցությունն անզոր է խնդիրը հասկանալ, այսինքն՝ մտքի և բառի վերածել կնոջ զգացածը, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ «արյան-գիտակցության» ծավալման մի նոր՝ ավելի տարածական ընթացք. «...նույնիսկ սեփական սենյակում դեռևս շփոթված էր, մտքերը՝ խճողված: Չգիտեր՝ ինչպես վարվել: Իրականում նա ինչ տիպի տղամարդ էր: Իրոք հավանում էր իրեն: Իր կարծիքով՝ այնքան էլ չէ: Չնայած բարի էր: Մի տեսակ ջերմ, միամիտ բարություն, տարօրինակ ու անսպասելի, որ գրեթե ստիպում էր արգանդդ բացել նրա առջև: Իսկ եթե նույն բարությամբ էր վերաբերվում ցանկացած կնոջը: Թեկուզ այդպես, միևնույն է, զարմանալիորեն հանգստացնող էր ու սփոփող: Բացի այդ՝ կրքոտ տղամարդ էր, առողջ ու կրքառատ: Գուցե այնքան էլ ինքնակա չէր և բոլոր կանանց հետ լինում էր ձիշտ այնպես, ինչպես իր հետ: Իրոք անհատական ոչինչ չկար: Ինքն իրականում սովորական էզ էր նրա համար: / Բայց հավանաբար, այդպես ավելի լավ էր: Ի վերջո, Կոնիի մեջ գտել էր կնոջը և սիրալիկ էր նրա հանդեպ, ոչ մի տղամարդ դեռևս այդ բանը չէր արել»²²:

Կոնիի մտքերն ասես տարերայնորեն հաջորդում են իրար և լիարժեքորեն արտահայտում հերոսուհու ապրումները, սակայն, միևնույն ժամանակ, դրանց միջև հակասություններ կան, մտքի անկանխատեսելի և անտրամաբանական շրջադարձեր. «Իրոք հավանում էր իրեն: Իր կարծիքով՝ այնքան էլ չէ: Չնայած բարի էր»: Բարի էր, և այդ պատճառով չէր հավանում, թե՞ չէր հավանում՝ բարությունից դրդված: Իհարկե, երկու տարբերակն էլ սխալ են, քանի որ «չհավանելը» միտքը ծնվել է ոչ թե Կոնիի ներքին վստահության արդյունքում, այլ ձիշտ հակառակը՝ վախի և կասկածի, ավելի ձիշտ կլինի ասել՝ այդ պահի «հավանելը» զգացումը կորցնելու վախի արդյունքում: Կոնիի այս մտորումներն ընթանում են ընդհանուր անորոշություն մեջ, անորոշություն, որ գիտակցության թշնամին է: Հատկապես որոշիչ է ներքին հոգեվիճակ նկարագրելիս՝ «անսպասելի» բառի գործածումը: Կոնին

22 Լորենս Դ. Հ., «Լեդի Չաթերլիի սիրեկանը», «Լուսակն» հրատ., Երևան, 2014, էջ 194:

գրեթե ոչնչում համոզված չէ, բացի այն բանից, որ այդ տղամարդն «առողջ էր ու կրթառատ», և որ ոչ մի տղամարդ դեռևս նրա մեջ կին չէր գտել և սիրալիր չէր եղել նրա հանդեպ:

Տղամարդու և կնոջ միջև սեռական փոխհարաբերությունը լորենսյան «արյան-գիտակցության» հիմնաքարն է, առանց որի անհնար է «մտքի-գիտակցության» հաղթահարումը և ինտուիցիայի բարդ ոլորտի ակտիվացումն ու բացահայտումը. «Լորենսը ժամանակակից գիտակցությունը զուգորդում է հակահինտուիտիվության հետ, որը նրան խորապես անհանգստացնում էր, քանի որ անգլիացի գրողը զգում էր, որ քաղաքակրթությունը, ծայրահեղ ռացիոնալիզմը և դրան հաջորդող ինտուիցիայի կորուստը միասին տղամարդուն և կնոջը ավելի են հեռացնում սեքսի կենսական էներգիայից»²³: Սակայն, պետք է նշել, որ սեքսի և կրքի մասին լորենսյան պատկերացումները մարդու բնազդների բավարարման հետ որևէ առնչություն չունեն: Այո, առանց մարմնական-ֆիզիկական հարաբերության Լորենսը չի պատկերացնում որևէ բնական մերձեցում տղամարդու և կնոջ միջև, բայց երբ նա խոսում է սեքսի մասին, նա առաջին հերթին անդրադառնում է սիրո զգացումին, որն էլ հենց բնական ձգողության հիմքն ու նախապայմանն է: Իր «Սեքսը, գրականությունը և գրաքննությունը» (“Sex, Literature, and Censorship”) գրքում Լորենսը սերը ներկայացնում է որպես երկու առանձին մասնիկների միավորում, սակայն դա պարզունակ միավորում չէ, այլ բարդ փոխհարաբերություն, որ տեղատվության է նման. «Սերը աշխարհի երջանկությունն է: Սակայն երջանկությունը բովանդակ ավարտունություն չէ: Սերը միավորումն է: Բայց չկա միավորում՝ առանց իրարից անջատվելու: Սիրո մեջ է միավորվում բերկրանքի և ուրախության եզակիությունը: Սակայն դրանք չեն կարող միանալ, եթե նախկինում անջատ չեն եղել: Եվ միավորվելով և վերածվելով մեկ ամբողջ շրջանի՝ դրանք այլևս սեր չեն: Սիրո շարժումը ասես մակընթացություն լինի. Տեղատվություն է անհրաժեշտ: Այսինքն՝ միակցումը կախված է անջատումից. սիստոլան²⁴ կախված է դիաստոլայից²⁵. հոսքը կախված է տեղատվությունից: Չի կարող գոյություն ունենալ ունիվերսալ կամ անխախտ սեր: Ծովը չի կարող մի-

23 Like a Black and White Kaleidoscope Tossed at Random: Essays on D. H. Lawrence's Women in Love, (Edited by Jean-Paul Pichardie and Philippe Romanski), University de Rouen Press, 2001, page 60.

24 Սրտի ձախ փորոքի կծկում:

25 Սրտի փորոքների կծկումների դադար:

անգամից հասնել բարձր մակընթացության ամբողջ մոլորակում: Սիրո անվիճելի իշխանություն չի կարող լինել: Որովհետև սերը ստույգ է, երբ ձանապարհորդում է: Մեկն ասել է՝ «Ավելի լավ է ձանապարհորդել, քան ժամանել»: Սա անհավատության էությունն է: Սա հավատ է հանդեպ բացարձակ սերը, երբ սերն իր բնությամբ է հարազատ: Սա հավատ է հանդեպ միջոցը, և ոչ հանդեպ ավարտը: Սա ստույգ հավատ է հանդեպ ուժը, քանզի սերը ուժ է միավորող²⁶»:

Սերը ամենի շարժիչն ու հավերժական շարժումն է, առանց որի՝ որևէ այլ բան իմաստ չունի: Սակայն սերը պետք է նյութականանա, դառնա շոշափելի՝ իրագործվի: Եվ հենց այստեղ էլ անհրաժեշտ է սեքսի մասին խոսել, որը, Լորենսի պատկերացմամբ, ոչ թե սոսկ բնազդ է, այլ՝ սերն իրագործելու միակ ձանապարհը մարդու համար:

«Ամոթալի է, որ «սեքս»-ը նման տգեղ փոքրիկ բառ է: Տգեղ կարճ բառ և իրականում գրեթե անհասկանալի: Վերջապես, ի՞նչ է սեքսը: Ինչքան շատ ենք մենք մտածում դրա մասին, այնքան քիչ բան գիտենք: Գիտությունն ասում է, որ դա բնազդ է. սակայն, ի՞նչ է բնազդը: Ըստ երևույթին՝ բնազդը մի հին, արմատացած սովորույթ է: Սակայն սովորույթը, անգամ եթե հին է, պետք է սկիզբ ունենա: Եվ իրականում սեքսը չունի սկիզբ: Այն այնտեղ է, որտեղ կա կյանք: Հետևաբար, սեքսը ձևավորված «սովորույթ» չէ: Նրանք կրկին սիրո մասին խոսում են՝ ասես քաղցի: Քաղց, սակայն ինչի՞ հանդեպ: Բազմացման քաղց: Աբսուրդի է նման: Նրանք ասում են, որ սիրամարզը հագել է իր գունագեղ փետրածածկույթը՝ էգ սիրամարզին շլացնելու համար, որպեսզի վերջինս թույլ տա իրեն բավարարել բազմացման սեփական քաղցը: Սակայն ի՞նչն է պատճառը, որ էգ սիրամարզը չի հագնում գունագեղ փետրածածկույթ՝ արուին շլացնելու և բազմացման իր քաղցը բավարարելու համար: Էգ սիրամարզը, վստահաբար, հավասարապես ցանկանում է ձու ածել և ձտեր ունենալ, որչափ արուն: Մենք չենք հավատում, որ էգ սիրամարզի սեռական ցանկությունն այնչափ թույլ է, որ նա գրգռվելու համար կարիքն ունի փետուրների երկնագույն շքեղության: Բոլորովին»²⁷: Ակնհայտ է, որ Լորենսը միշտ դեմ է եղել գիտականությանը, մարդու ներաշխարհը, գործողություններն ու դրանց դրդապատճառները գիտական կերպով վերլուծելուն՝ բանաձևելուն:

26 Sex, Literature, and Censorship: D. H. Lawrence; Edited by Harry T. Moore, The Viking Press- New York, page-33.

27 Sex, Literature, and Censorship: D. H. Lawrence; Edited by Harry T. Moore, The Viking Press- New York, page-40.

Այս համատեքստում էլ նա բնագոյն դիտարկում է որպես սիրո և զգացմունքի համար թշնամական մի երևույթ, որը, լինելով «մտքի-գիտակցության» բաղադրիչներից մեկը, պետք է հաղթահարվի «արյան-գիտակցությամբ» և վերածվի նոր սկզբի, նոր էության, նոր կյանքի՝ երեխայի: Եվ այդ իրավունքը «Լեդի Չաթերլիի սիրեկանը» վեպում վաստակում են անտառապահ Մեյլրոսն ու Կոնի Չաթերլին, և չնայած դեռ երկար պետք է սպասեն մի նոր միավորման, կյանքի ուժը նրանց առաջ է մղում, և միայն այդ երկուսն են, որ սրտալից սպասում են վաղ ամուսնը. «Եվ Կոնին կրկին հեռացավ Ռագբիից և Հիլդայի հետ մեկնեց Շոտլանդիա: Մեյլրոսը երկրի խորքը գնաց և աշխատանք գտավ ագարակում: Միտքն այն էր, որ հնարավորության դեպքում ապահարզան կստանար՝ անկախ այն բանից, թե նույնը կհաջողվե՞ր Կոնիին: Վեց ամիս կաշխատեր ագարակում, հետագայում Կոնիի հետ իրենց սեփական փոքրիկ ագարակը ձեռք կբերեին, որի վրա էլ կծախսեր իր ամբողջ ուժն ու եռանդը: Քանի որ զբաղմունք պիտի ունենար, թեկուզ շատ ծանր աշխատանք աներ, որպեսզի ինքն իր ծախսերը հոգար, նույնիսկ եթե սկզբնական շրջանում Կոնիի փողն էր ներդնելու: / Ուստի, ստիպված էին սպասել մինչև գարուն, մինչև երեխան կծնվեր, և կրկին վաղ ամառ կլինե՞ր²⁸»: Վերոգրյալ պարբերությունը նաև արտահայտում է և մեզ գայթակղում անդրադառնալ Լորենսի արձակի լեզվառձական յուրահատկություններին, երբ պարզ պատմողական նախադասություններն անչափ նուրբ ձևով օղակվում են՝ վերածվելով ազդեցիկ կուլմինացիայի ընդամենը չորս բառի օգնությամբ՝ «և կրկին վաղ ամառ կլինե՞ր», որտեղ հիմնական բեռը կրում է «վաղ» բառը: Սակայն վերոնշյալը կդառնա մեր հաջորդ ուսումնասիրության խնդրո առարկան:

Բանալի բառեր. – մոդեռնիզմ, «արյան գիտակցություն», «գիտակցության հոսք», մարմնական սեր, պսիխոանալիզ, Զ. Ֆրեյդ

28 Լորենս Դ. Հ., «Լեդի Չաթերլիի սիրեկանը», «Լուսակն» հրատ., Երևան, 2014, էջ 449:

Резюме
Vahe Arsenyan

"Сознание крови" в романе Дейвида Герберта Лоуренса
"Любовник леди Чаттерлей"

В статье рассматривается проблема "сознания крови" (blood-consciousness) в романе Д.Г. Лоуренса с точки зрения философско-психологического восприятия, которая подробно проанализирована в известных работах данного автора "Психоанализ и бессознательное" и "Фантазия бессознательного".

Summary
Vahe Arsenyan

"Blood-consciousness" in the novel "Lady Chatterley's Lover" by D.H. Lawrence

The article is focused on the analysis of the novel "Lady Chatterley's Lover" written by English modernist D.H. Lawrence from the philosophical and psychological perspectives. The idea of "blood consciousness" and "mind-consciousness" found in the novel is discussed in the author's two profound essays "Psychoanalysis and the Unconscious" and "Fantasia of the Unconscious".